ԳԼՈՒԽ ՅԽԶ.

Ամենայն պաշտօնատարք եթէ իշխան, և եթէ սպասաւոր, և եթէ վարձկան եթէ վաճառական և զամենայն զոր ինչ վաճառող 'ի միտս իւր տպաւորեալ ունիցի զի 'ի ժամ ընդունելոյ ռոճիկս, և զին վաճառելոյ իրաց իւրոց ստանալոց է միմիայն ինն 'ի տեղի տասնաց, այսինքն ընդունելի եղեալ զին արդեան և ընչից իւրոց որ քան որ իցէ, հատուցանողն հանիցէ տասանորդս և մնացորդ միայն հատուցանէ։

ԳԼՈՒԽ ՅԽԷ.

'Ի պատճառէ Օրինացն գլուխ 346 տասանորդէ ստացեալ բանն պարտ է լինիլ կամ ոսկի և կամ երծաթ, և այս հրահայելիք պիղծ լիցի վասն ամենայն ընութեան մարդոյ բնակողաց 'ի հայաստանեաց յաշխարհի վասն ծախելոյ և վայելելոյ, եթէ ոչ իւրաքանչիւր ոք ամուր և ապահով և թագստի տեղի պահել պարտ են անշարժ վասն յանկարծահաս պատուհասի և հարկաւորութեան ժամանակի, որ եթէ 'ի ոչ ոք պատճառէ զերծանիլ և փրկիլ ոչ կարի, սա լիցի ծախ վասն փրկութեան իւրաքանչիւր պահողաց։

ԳԼՈՒԽ ՅԽԸ.

Ամենայն և ով ոք անօրէնութեան ծնեալ